Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
27 նոյեմբերի 2023 թվականի N 401-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2023 թվականի դեկտեմբերի 1–ից

# Կարպիսա խանութների ցանցում կատարված վճարումների համար cashback-ի տրամադրման պայմաններ

## 1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավի ժամանակահատված՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից 01.12.2023թ-ից 01.12.2024թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված պրեմիում և բիզնես դասի քարտեր (Visa Platinum, Travel, Visa Signature, Visa Infinite, Visa Infinite Special Edition, Visa Business, Visa Business Platinum և այլ բիզնես/պրեմիում դասի քարտեր):
1.3 **Քարտատեր՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված Քարտի քարտատեր:
1.4 Արշավին մասնակցելու դեպքում Քարտատերն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

## 2. Արշավի պայմաններ.

2.1 01.12.2023թ-ից 01.12.2024թ-ը ներառյալ Կարպիսա խանութների ցանցում կատարված վճարումների (այսուհետ՝ Վճարում) դիմաց Քարտատերերը կստանան 5% cashback, եթե կատարված վճարման չափը գերազանցի 10 000 ՀՀ դրամը: Ընդ որում, 5% cashback-ը գործելու է 1.2 կետում նշված քարտերի պայմաններով սահմանված cashback-ից (առկայության դեպքում) անկախ:

Քարտի տրամադրման և սպասարկման այլ պայմանները սահմանվում են համապատասխան վճարային քարտի տեղեկատվական ամփոփագրով, որոնք հրապարակված են Բանկ կայքէջում (www.idbank.am հղմամբ):

2.2 Յուրաքանչյուր օրացույցային ամսվա ընթացքում կատարված Վճարումների համար Cashback-ը հաշվարկվում և վճարվում է հաջորդ ամսվա մինչև 5-րդ աշխատանքային օրը: Փաստացի ստացման ենթակա Cashback-ը Քարտատիրոջը փոխանցվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը գանձելուց հետո:

2.3 Բանկի կողմից կարող են սահմանվել Cashback-ի տրամադրման սահմանաչափի/պայմանների միակողմանի փոփոխություններ:

2.4 Քարտատերերի կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և վերջիններիս կողմից լրացուցիչ գործողություն չի պահանջվում:

2.5 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: